ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0090, ք.Երևան, Շոպրոնի 77

N 01/18273

«26» 07 2023թ.

Խաչատուր Վազգենի Խեչումյանին
Հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի փ., Մանթաշյան 28 Ա, 15

ՈՒղարկվում է Ձեր դիմումի հիման վրա ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունքում իրականացված վարչական բողոքարկման վարույթի արդյունքում թիվ 8300649798 վարչական ակտն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումը:

Առդիր՝ 3 »թերթ:

Պետ, ոստիկանության գնդապետ՝ **Ա. Խուդինյան**

Կատ. Մ.Գույումջյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 18.06.2023թ. կայացված թիվ 8300649798 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին,

«22»__07__2023թ.

ք.Երևան

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետ, ոստիկանության գնդապետ Ա.Խուդինյանս, վերանայելով Խաչիկ Վազգենի Խեչումյանի (Այսուհետ՝ դիմող) 20.06.2023թ.-ի դիմումի (ՊԾ ստացված 22.06.2023թ.-ին) հիման վրա հարուցված վարչական բողոքարկման վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

18.06.2023թ-ին՝ ժամը 09:25-ի սահմաններում, Երևան քաղաքի Ագաթանգեղոսի փողոցում, Խաչիկ Խեչումյանի վարած «Մազդա» մակնիշի 37 RQ 217 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը կանգնեցվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գնդի ավագ պարեկ Վլադիմիր Վաթյանի կողմից՝ տրանսպորտային միջոցը անվտանգության գոտիով չամրակապված վիճակում վարելու համար: «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի «բ» կետի խախտման համար: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի հատկանիշներով կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և կայացվել վարչական իրավախախտման գործով թիվ 8300649798 որոշումը՝ դիմողին տուգանելով 10.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Դիմողը 20.06.2023թ.-ի դիմումի (ՊԾ ստացված 22.06.2023թ.-ին) դիմումով խնդրել է վերանայել ՀՀ ՆԳՆ պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 18.06.2023թ. կայացված թիվ 8300649798 որոշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունքում հարուցվել է վարչական բողոքարկման վարույթ:

Դիմումի քննարկման արդյունքում ձեռք բերված ապացույցների և փաստական տվյալների համադրմամբ պարզվել է, որ վարչական իրավախախտման գործով 18.06.2023թ. կայացված թիվ 8300649798 որոշումը ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ և հիմնավորմամբ.

Ուսումնասիրելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայողի անհատական տեսաձայնագրող սարքի տեսաձայնագրությունը պարզ է դառնում, որ դիմողը չի հերքում չամրակապված լինելու հանգամանքը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի «բ» կետի համաձայն՝ մեխանիկական տրանսպորտային միջոցի, ինչպես նաև տրամվայի վարորդը, բացի սույն հոդվածի երկրորդ մասում նշվածից, պարտավոր է՝ կառուցվածքով նախատեսված անվտանգության գոտիներով կահավորված տրանսպորտային միջոցներով երթևեկելիս լինել ամրակապված և չփոխադրել անվտանգության գոտիներով չամրակապված ուղևորների:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցներ վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղևոր փոխադրելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողը պարտավոր է սույն հոդվածի երրորդ մասով սահմանված կարգով ազդանշան տալով կանգնեցնել տրանսպորտային միջոցը, եթե՝ ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ օրենսդիրը, ոստիկանության ծառայողին տալով լիազորություն իրավախախտումը հայտնաբերելու, արձանագրություն կազմելու, որոշում կայացնելու, որպես պարտադիր պայման, չի նշում իրավախախտման փաստարկման համար տեխնիկական սարքի կիրառումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և սոցիալիստական իրավագիտակցությամբ:

Այսպիսով, Արեգ Հարությունյանի արարքում առկա են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման հատկանիշներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ ՆԳՆ պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 18.06.2023թ. կայացված թիվ 8300649798 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել դիմողին և ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գունդ:

Պետ, ոստիկանության գնդապետ՝ **Ա. Խուդինյան**